ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ք.Աշտարակ 2025թ. մարտի 6-ին, N 41-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՀՀ Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2025 թվականի հիմնական միջոցառումների պլանի» 3.1 կետը և ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 2015 թ.-ի հունվարի 22-ի «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու մասին» թիվ 46-Ն որոշման 6-րդ կետի 3-րդ ենթակետի և 18-րդ կետի դրույթներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.2025 թ.-ի մարտի 14-ին ՀՀ Արագածոտնի մարզում իմ ղեկավարությամբ անցկացնել շտաբային ուսումնավարժություն (այսուհետ՝ ՇՈՒ) ««Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը ՀԱԷԿ-ի արտանախագծային վթարի դեպքում» թեմայով:

2.ՇՈՒ-ի նախապատրաստման և անցկացման նպատակով նշանակել՝

1) ՇՈՒ-ի ղեկավարի տեղակալ՝ ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ, մարզի տարահանման հանձնաժողովի նախագահ Հարություն Գուլյանին.

2) ՇՈՒ-ի ղեկավարման շտաբի պետ՝ ՀՀ Ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Արագածոտնի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Մենուա Ասատրյանին.

3.Հաստատել ՇՈՒ-ի ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի.

4.ՇՈՒ-ին ընդգրկել տարահանման հանձնաժողովներին, ՀՀ Ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Արագածոտնի մարզային փրկարարական վարչությանը, Աշտարակ, Թալին քաղաքներին, Ն.Եդեսիա, Ն.Ամանոս, Արագածոտն, Արուճ, Կոշ, ՈՒջան, Ոսկեվազ, Օշական բնակավայրերը, «Աշտարակի և Թալինի բժշկական կենտրոններին», ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Աշտարակի և Թալինի բաժիններին, «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի Արագածոտն մասնաճյուղ» ՊՈԱԿ-ին, «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ-ին, «Մուսալեռ» ՓԲԸ մասնաճյուղի Աշտարակի տեղամասին, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Արագածոտնի ԳԳՄ-ին, «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը:

5. ՇՈՒ-ի ղեկավարման շտաբի պետին.

1) ապահովել անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը և մինչև 2025թ. մարտի 10-ը ներկայացնել իմ հաստատմանը.

2) կազմակերպել ուսումնավարժությանը ներգրավվող պաշտոնատար անձանց և ուժերի նախապատրաստումը՝ համաձայն հաստատված օրացուցային պլանի.

3) ապահովել համագործակցությունը ուսումնավարժությանը ներգրավված մասնակիցների միջև.

4) ճշգրտել «ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարի դեպքում ՀՀ Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության», «ՀՀ Արագածոտնի մարզային տարահանման» և «ՀՀ Արագածոտնի մարզի տարահանված բնակչության կենսաապահովման» պլանները.

5) ճշտել համայնքների և կազմակերպությունների կողմից հատկացվող ուժերն ու միջոցները և դրանց օգտագործման կարգը.

6) ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել 2025թ. Մարտի 13-ին:

6. ՇՈՒ-ի մասնակիցներին՝

1) ուսումնավարժության նախապատրաստման հարցերով սերտորեն համագործակցել ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ,

2) մարզային փրկարարական վարչության հետ ճշգրտել «ՀԱԷԿ-ի միջուկային և /կամ/ ճառագայթային վթարի դեպքում ՀՀ Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության» և «ՀՀ Արագածոտնի մարզային տարահանման» պլաններով նախատեսված միջոցառումները,

3) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին:

7. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

8. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 3/7/2025 14:44:08 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս.ՄՈՎՍԻՍՅԱՆ